

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
Գիտական խորհրդի 09.09.15 թ. կայացած թիվ 1.15-16 նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 34 անդամներից 26-ը:

Հաստատվեց նիստի հետևյալ օրակարգը՝

1. ԵՊՀ անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում
2. ԵՊՀ գիտական խորհրդի անդամության թեկնածուների առաջադրում
3. Առկա ուսուցմամբ 1-ին տարվա ասպիրանտների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում
4. Ընթացիկ հարցեր:

Առաջին հարցի կապակցությամբ Ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան Ռ. Ավագյանը ներկայացրեց անվանական կրթաթոշակների ներկայացվող ուսման բարձր առազադիմություն ունեցող թեկնածու ուսանողների ղեկանատի կողմից կազմված ցուցանկը:

Որոշեցին. Անվանական կրթաթոշակների ներկայացնել Ֆիզիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի հետևյալ ուսանողներին.

ԵՊՀ- ի կրթաթոշակ

Ավետիսյան Վարդան Գևորգի

Ալիխանյան եղբայրների անվան կրթաթոշակ

Մկրտչյան Տիգրան Սամվելի

Վ. Համբարձումյանի անվան կրթաթոշակ

Գևորգյան Վիրաբ Արմենի

Վարդանյան Թաթևիկ Սամվելի

Գ. Սահակյանի անվան կրթաթոշակ

Սահարյան Աստղիկ Արամի

Երկրորդ հարցի կապակցությամբ

Ֆիզիկայի ֆակուլտետի կողմից ԵՊՀ գիտական խորհրդի անդամության թեկնածուների առաջադրման հարցը:

Պրոֆեսորներ Դ.Ս Սեդրակյանը և Լ.Ս Ասլանյանը համապատասխանաբար ներկայացրեցին դոկտոր, պրոֆեսոր Ատոմ Ժորայի Մուրադյանի և դոկտոր, պրոֆեսոր Ռոման Բախշիի Ալլահվերդյանի թեկնածությունները:

Որոշեցին. Ֆիզիկայի ֆակուլտետի կողմից ԵՊՀ գիտական խորհրդի անդամության թեկնածու առաջարկել Ընդհանուր ֆիզիկայի և աստղագիտության ամբիոնի վարիչ Ա.Ժ. Մուրադյանին և Օպտիկայի ամբիոնի վարիչ Ռ.Բ. Ալավերդյանին:

Երրորդ հարցի կապակցությամբ քննարկվեցին ամբիոնների կողմից ներկայացված որոշումները՝ նոր ընդունված ասպիրանտների հետեագոտական թեմաների հաստատման և նրանց գիտական ղեկավարների նշանակման մասին:

Որոշեցին. Հաստատել համապատասխան ամբիոնների կողմից ներկայացված ասպիրանտների թեկնածուական թեզերի թեմաները և նրանց գիտական ղեկավարներին:

Ընթացիկ հարցեր.

Նիստի ավարտից առաջ խորհրդի նախագահ Ռ. Ավագյանը հիշեցրեց ամբիոնների վարիչներին ֆակուլտետի կայք էջի թերությունները արագ շտկելու անհրաժեշտության մասին:

Ֆիզիկայի ֆակուլտետի
Գիտական խորհրդի նախագահ՝

Ռ. Մ. Ավագյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ի. Գ. Հարությունյան